

Բ Ա Ն Ա Լ Ի Ք

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՒԹԻՑ

(Տես երես 30 :)

Ա. ԵՐԿՐԱՅԱՆԱԿԱՆՔ

Գ. ԵՐԿՐԱՇԱՐԺ .

24 Ի՞նչ է երկրաշարժն կամ ժածն. — Այն քիչ կամ շատ ուժով ցնցմունքն որ գետինը կը շարժեն :

25 Ինչո՞ւ համար ժածի ատեն տանը մէջ եղած բաներն կը տատանին և կը գլորին : — Վասն զի երկրիս երեսն կը գողայ, և վրայի եղած բաներն ալ կը գողըզան :

26 Ո՞ր բաներն են որ ամենէն առաջ կը գողըզան : — Կախուած բաներն, ինչպէս զանգակք, ճօճանակք, և այլն :

27 Ի՞նչ է երկրաշարժին պատճառն : — Էրկրիս կենդրոնական կրակն. հրացեալ հեղուկն միշտ կարծրանալու կ'երթայ՝ վերէն եկած պաղութեան պատճառաւ . այս յեղափոխութեան ատեն՝ կազ կամ շոգիներ կ'արձրկէ, որք ծաւալելու ատեն եթէ բաւական համարձակ ելք չգտնեն հրաբլրիսց նեղ վիհերուն մէջ կը սկսին դիզուիլ և կը ճնշուին. ինչուան որ իրենց առածգութեամբը և անդադար տաքութեան ազդելէն սփռուելովն՝ գետնին արգելքներուն կը յաղթեն, և դուրս ելնելու համար՝ գանիկայ վեր կը հրեն. ինչպէս որ եռացեալ ջրէն ելած շոգին կը հրէ և կը մղէ ամանին խուփը :

28 Ո՞րչափ ատեն կը տեւէ ժածն. — Ընդհանրապէս քանի մը րոպէ. քիչ անգամ վայրկեանի մը ութերորդ մասը կ'անցնի :

29 Ո՞րչափ մնաս կու տայ գետնաշարժն : — Երբեմն միայն գետինը կը տատանի, կամ տան մէջ կախուած բաները կը շարժին. բայց երբեմն ալ սաստիկ ցնցմամբ՝ շէնքեր և ինչուան ամբողջ քաղաքներ կը կործանին :

30 Ժածը իմանալէն վերջը տան մէջ մնալու է : — Չէ. ապահով ճամբան է բաց տեղ, դաշտերու մէջ երթալ, աւելի լաւ ծովու վրայ ելլել նաւակով, եթէ ծովն մօտ է :

31 Ինչո՞ւ համար ծովն ապահովագոյն է : — Վասն զի ջրոց բնութիւնն է միշտ հարթ հաւասար մնալ, և ցամաքէն քիչ մը հեռանալով ցնցմունքը խիստ նուազ կ'ըզան :

32 Ե՛տ ժածեր նախընթաց նշաններ ունին : — Շատ հեղ աղբիւրներն կը ցամքին. գետնի տակ բնակող կենդանիք զարհուրած կը փախչըտին, և ինչուան թռչուէր օդուն մէջ խառնակ շրջաններով կը թռչըտին :

33 Ո՞ւր տեղուանք աւելի շատ կը հանդիպին ժածք : — Ուր որ հրաբլրի երկիրներ կան :

34 Ժածի հետ ի՞նչ երևոյթք կ'ըլլան : — Գետնին պատառուածքներէն թանձր ծուխ մը կ'ելլէ, և օդը կ'ապականէ, որ և բուսոց շատ մնասակար է :

35 Սովորաբար երբ կը դադրին երկրի մը սասանութիւնք : — Երբոր մօտերը հրաբուրի մը կը բացուի :

36 Ինչո՞ւ համար այն ատեն կը դադրին սասանութիւնք : — Վասն զի կազք ճամբայ մը կը գտնեն հրաբուրիս բաժակէն ելլելու և ալ չեն ստիպուիր երկրիս երեսէն ճամբայ բանալու :

37 Ի՞նչ են ջերմուկք : — Ջերմուկք կ'ըսուին գետնէն բղխած տաք ջուրերն :

38 Ինչո՞ւ այնպէս տաք կը բղխեն : — Վասն զի գետնին խորը ինջած ջուրերն՝ կրակ կտրած խաւերու հանդիպելով՝ կ'առնուն անոնց տաքութիւնը և այնպէս երկրիս երեսը կ'ելլեն :

39 Ինչո՞ւ ջերմուկք միշտ աղային կամ ծծմբային խառնուրդ կ'ունենան : — Վասն զի երկրիս խորերը այն նիւթերն կան, եռացեալ ջուրերն զանոնք կը հալեցընեն և կը ծծեն :

40 Ուրեմն ջերմուկք երկրիս կենդրոնէն կը բղխին : — Չէ, այլ մէկալ ջրերու պէս իրենք ալ անձրեւէն առաջ եկած են, բայց երկրիս տաք խաւերուն մէջէն անցնելով կ'առնուն ջերմութիւնը :

41 Եթէ 100 աստիճան (կելսոսի կամ հարիւրամասն ջերմաչափի) տաքութեան ջուրն ՚ի շոգի կը դարձընէ, ինչո՞ւ երկրիս խորէն եկած ջուրը շոգի պէս չգար դուրս : — Վասն զի ջուրն մեծ ճնշում մը կը կրէ, և քանի որ վեր գայ՝ կը պաղի. ասով՝ թէպէտ իր աղբերական մէջ շատ տաք է, բայց ոչ նոյնպէս օդու հանդիպելուն : (Սակայն եթէ իր բղխած տեղէն սկսեալ դիւր և անարգել ճամբայ մը գտնէ՝ այն ատեն շոգիախառն կ'ելլէ ջուրն) :

42 Ինչո՞ւ արգեսեան ջրհորոց ջուրն առջի բերան պաղ կ'ելլէ, բաւական խորութեան հասնելէն վերջը կը սկսի երթալով աւելի տաքնալ : — Քանի որ ջուրն քիչ խորութեան մէջ է՝ ոչ երկրիս վրայի օդուն տաքութիւնը կրնայ առնուլ և ոչ երկրիս կենդրոնին, անոր համար պաղ

կըլլայ . և թէպէտ միշտ նոյն աստիճան ջերմութեանն ունի՝ բայց ամառը աւելի պաղ կ'երևայ , ձմեռն աւելի տաք : 40 մեզր խորը անցնելէն վերջը՝ կը սկսի տաքութիւնը և երթալով կ'աւելնայ . (ամէն 50 մեզրի՝ մէկ աստիճան մը , ինչուան 6-700 մեզր խորութեան , անկէ ետև աւելի կը սաստկանայ տաքութիւնն :

**Դ. Վերամբարձումներ .**

43 Ի՞նչ կ'ըլլան այն ջուրերն որ կը ցընդին ի գետոց , ի լճաց և ի ծովուց : — Շոգի գառնալով մթնոլորտին վերին կողմերը կ'ելլեն , ամպ կը ձևանան , և հովերէն մղուած՝ խտանալով նորէն հեղուկ կը դառնան և կը թափին ի գետին :

44 Ինչո՞ւ երբեմն լճեր կը ցամքին : — Վասն զի երբեմն գետնաշարժ մը վճեր և յորձանքներ կը բանայ , ուսկից ջուրն վար իջնելով՝ լճին յատակը ցամաք կը թողու . կամ ջրոց շոգիանալով ցնդումը սաստիկ կ'ըլլայ . կամ լճին յատակն բարձրանալով ջուրերն ուրիշ կողմ կը ծաւալին :

45 Գետնաշարժով ի՞նչպէս կը ցամքի լիճ մը : — Երկրիս խորերը և մանաւանդ լերանց քով մեծամեծ այրեր կամ խոռոչներ կը գտնուին , որք պատճառով մը բացուելով՝ կ'ընդունին ջուրերը :

46 Ինչէ՞ն կը ձևանան այս ստորերկրեայ այրք կամ դատարկ տեղիք : — Երկրիս կենդրոնէն ելած կազերուն յուզմամբը : (Երկրիս հալած ծոցէն ելած կազք սաստիկ առաձգութիւն ունին , և կ'ուղեն ճամբայ մը . բայց կամայ կամաց տաքութիւննին նուազելով իրենք ալ տեղ մը կը դադրին և կը խտանան . խտանալով ի հարկէ կ'ամփոփուին , և առջի բռնած տեղերնուն մէկ մասը պարապ կը մնայ . ահա աս կէ են ստորերկրեայ վիհք :

47 Շոգիացումն կամ ցնդումն ի՞նչպէս կրնայ ցամքեցընել լիճ մը : — Երկայն տարիներու միջոց քիչ քիչ ջուրն շոգիա-

ցեալ կը պակսի . լճէն ելլելով՝ ուրիշ տեղ մը կ'իյնայ խտացեալ և հովերէն մղուած :

48 Ծովն ալ կրնայ շոգիացմամբ ցամքիլ : — Չէ . վասն զի ծովք իրարու հետ հաղորդութիւն ունին . իսկ ծովակք և լիճք գետեր ընդունելով՝ շոգիացմամբ կորուսածին տեղը կը լեցընեն :

49 Ուրեմն ծովուն մակերևոյթն երթալով չի՞ ցածնար : — Ոչ :

50 Հապա ինչէ՞ն է որ շատ երկիրներ որ ատենօք ծովուն եզերքն էին՝ հիմա անկէ հեռացեր են : — Ասոր պատճառն երկրին վերամբարձումն է , որով ինքն հեռացեր է ծովէն :

51 Ի՞նչ է վերամբարձումն երկրի : — Երկրիս կենդրոնական ուժ մ'է որով երեսին մէկ կողմը կը սկսի ուռիլ բարձրանալ :

52 Ի՞նչ է ասոր պատճառն : — Երկրիս կենդրոնը եղած հալական նիւթին շարունակ պաղումն , որ թանձրանալով աւելի տեղ կը բռնէ , և անդադար կը մղէ մնացեալ հեղուկ զանգուածը և իր արտաքին պատերը . որով կը ստիպէ զասոնք իրեն տեղ տալ՝ կամաց կամաց վեր ամբառնալով :

53 Արդեօք մեծամեծ վերամբարձումներ կազերուն ծաւալական զօրութեամբը եղած չեն : — Ոչ . վասն զի կազք շատ ընդարձակ կէտերու վրայ չեն կրնար ազդել , միայն ժաժ ու հրաբուլիս կը պատճառեն . իսկ վերամբարձումներ անդադար և շարունակաբար և շատ ընդարձակ սահմանայ մէջ կ'ըլլան :

54 Ինչո՞ւ երբեմն ցամաք եղած երկիրներ հիմա ջրով ծածկուած են : — Անոր համար որ երկրիս երեսն տեղ մը վեր բարձրանալով՝ ուրիշ տեղ մ'ալ կը ցածնայ . և որովհետև ջուրք հարթայատակ տեղեր կը կենան՝ ուր որ ճնշած և ցած ըլլայ՝ հոն կը վազեն և կը ծածկեն :

կը շարունակուի :